ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 6/3

«23» ապրիլի 2024թվականի գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝

Տեղ համայնքի ավագանու թվով 10(տասը)անդամներ՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Ղուկասյան Արագած Արշավիրի
5. Միքայելյան Աննա Միքայելի
6. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
7. Առաքելյան Վահե Վարդանի
8. Դալլաքյան Արման Յուրիկի
9. Ջեյնալյան Մասիս Արամայիսի
10. Շեգունց Ռոմիկ Ռոլանդի

Բացակայում են Տեղ համայնքի ավագանու թվով 5(հինգ) անդամներ՝ Կարեն Բաղդասարյանը, Արգամ Հովսեփյանը,Հայրապետ Հայրապետյանը, Սևադա Դանիելյանը և Ասպետ Գալստյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայքնապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար՝ Արշալույս Ավետիսյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 10 (տաս)** անդամները:

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝

Համայնքի ղեկավարի խորհրդական Սուրիկ Էյլազյանը, Տեղ համայնքի անասնաբույժ Արագած Ղուլունցը, <<Տեղ կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Արտուր Գրիգորյանը, հաշվապահ՝ Արթուր Ջհանգիրյանը, Քարաշենի վարչական

ղեկավար Հակոբ Հակոբյանը, Տեղ համայնքի աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներով, որոշման նախագծի՝ կողմ- , դեմ - , ձեռնպահ - , քվեարկության արդյունքներով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 23-ի վեցերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023թվականի նոյեմբերի 23-Ի թիվ 18-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2024թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի ընթացքի մասին.

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի 19-րդ փողոցի թիվ 16/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին.

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N27-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագնու հերթական վեցերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ - 0 **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 18-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկ. Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-, դեմ-, ձեռնպահ-, քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 18-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 329468, 874 հազ.դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 337640, 677 հազ. դրամ» բառերով:

2)Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 366217, 622 հազ. դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 390371,181 հազ. դրամ» բառերով:

3)Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «Դիֆիցիտը (պակասուրդը)՝ 52010,504 հազ. դրամ»:

4)Որոշման 2-րդ, 3-րդ ,4-րդ,5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի նախատեսված հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ -10 **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. Ղարագյոզյան**)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով, որոշման նախագծի կողմ-, դեմ-, ձեռնպահ- քվեարկության արդյունքներով, Համայնքի ավագանին **որոշում է.**

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի բյուջեի 2024 թվականի կատարման առաջին եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-6 հատվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ - 9 **դեմ – 1** **ձեռնպահ** – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂ ԳՅՈՒՂԻ 19-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. Ավետիսյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 67-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնք) առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-, դեմ-, ձեռնպահ-, քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ հավանություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի 19-րդ փողոցի թիվ 16/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.08 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-101-0050-0013) հողամասն աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 411840 (չորս հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ -10 **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N27-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 83-րդ հոդվածի 2-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և հաշվի առնելով Տեղ համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-, դեմ-, ձեռնպահ- քվեարկության արդյունքներով, Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ

համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N27-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ - 10 **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով, որոշման նախագծի կողմ-, դեմ-, ձեռնպահ- քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին ***որոշում*** է.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական վեցերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի մայիսի 24-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ - 10 **դեմ – 0** **ձեռնպահ –**

Որոշումն ընդունվեց

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 14:40

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

_____ Դավիթ Ղուլունց
_____ Արամ Միրզոյան
_____ Նազիկ Բաղդասարյան
_____ Արագած Ղուկասյան
_____ Աննա Միքայելյան
_____ Լորա Սիմոնյան
_____ Արման Դալլաքյան

---------- Վահե Առաքելյան
---------- Ռոմիկ Շեգունց
---------- Մասիս Զեյնալյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ